



<i>Համարը</i> թիվ 14	<i>Տեսակը</i> Հիմնական
<i>Տիպը</i> Կարգադրություն	<i>Կարգավիճակը</i> Գործում է
<i>Սկզբնաղբյուրը</i> Չի հրապարակվել	<i>Ընդունման վայրը</i> Սոչի
<i>Ընդունող մարմինը</i> Եվրասիական միջկառավարական խորհուրդ	<i>Ընդունման ամսաթիվը</i> 12.08.2016
<i>Ստորագրող մարմինը</i> Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ	<i>Ստորագրման ամսաթիվը</i> 12.08.2016
<i>Վավերացնող մարմինը</i>	<i>Վավերացման ամսաթիվը</i>
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i>	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

12 օգոստոսի 2016 թվականի

թիվ 14

քաղ. Սոչի

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվրասիական միջկառավարական խորհրդի 2016 թվականի մայիսի 20-ի թիվ 8 կարգադրությունը կատարելու նպատակով՝

1. Ի գիտություն ընդունել «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ապրանքների հետազոծելիությունն ապահովելու մեխանիզմ սահմանելու մասին» համաձայնագրի նախագծով (այսուհետ՝ Համաձայնագրի նախագիծ, կցվում է) առաջարկված մոտեցումները:
2. Խնդրել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) անդամ պետությունների կառավարություններին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը լրամշակել Համաձայնագրի նախագիծը՝ ելնելով հետևյալից.
 - 2.1. Համաձայնագրի նախագծի պատրաստման նպատակով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝
 - ա) ապրանքներ՝ Միության մաքսային տարածք ներմուծված եւ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնված գույք.
 - բ) ապրանքների շրջանառություն՝ Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծում եւ Միության անդամ պետությունների տարածքներում դրանց իրացում.
 - գ) հետազոծելիություն՝ ապրանքների շրջանառության հսկողության նպատակով Համաձայնագրով սահմանված պահանջներին համապատասխան ապրանքների հետ իրականացվող գործառնությունների հաշվառումը կազմակերպելու առանձնահատկություններ:
 - 2.2. Համաձայնագրի մոտեցումների (սկզբունքների) հիման վրա պետք է ապահովվի՝
 - ա) Միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի շրջանակներում տեղափոխվող ապրանքների շրջանառության օրինականության հաստատումը.

բ) անձանց կողմից մաքսային եւ հարկային վճարների վճարումից խուսափելու տարբեր սխեմաների օգտագործումը բացառող պայմանների ստեղծումը:

2.3. Հետազոտությունն ապահովվում է ապրանքային խմբաքանակի փաստաթղթային նույնականացման հաշվին, ինչպես նաև Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանված դեպքերում՝ ապրանքի կամ դրա փաթեթվածքի վրա նույնականացման հատուկ նշանների կիրառման հաշվին:

2.4. Ապրանքների հետազոտության մեխանիզմն ընդգրկում է Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները: Միության անդամ պետությունների տարածքներում արտադրվող ապրանքները ենթակա չեն հետազոտության:

2.5. Ներմուծվող ապրանքների մատուցումը համաձայնագիրը կարգավորում է «Ներքին ապաման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեռնարկելուց հետո առաջացող իրավահարաբերությունները:

2.6. Ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս ներմուծելու ժամանակ դրանց հետազոտության շարունակականությունն ապահովելու համար Միության մյուս անդամ պետություններին անհրաժեշտ տեղեկությունների փոխանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից այդ տեղեկությունները տարանցիկ փոխադրման հայտարարագրում ներառելու միջոցով:

2.7 Համաձայնագիրն իրականացնելու նպատակով Կողմերը պետք է ապահովեն ապրանքատրեյդինգ փաստաթղթերի եւ (կամ) ապրանքների հետազոտությունն ապահովող այլ գործիքների (օրինակ՝ էլեկտրոնային հաշիվ ապրանքագրերի) էլեկտրոնային ձևով պարտադիր ձեռնարկման ներդրումը:

2.8. Միության տարբեր անդամ պետությունների ապրանքների հետազոտության ապահովման ազգային համակարգերի միջև տեղեկատվության փոխանակումն իրականացվում է Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցով:

2.9. Տեղեկատվական փոխգործակցության ժամանակ Միության այն անդամ պետության լիազորված մարմինը, որի տարածք ապրանքները ներմուծվում են Միության այն անդամ պետության լիազորված մարմնից, որի տարածքից այդ ապրանքները արտահանվում են, առցանց ռեժիմով ստանում է տեղեկատվություն այն գործարքի մասին, որի հիման վրա ապրանքները Միության մեկ անդամ պետության տարածքից տեղափոխվում են Միության մյուս անդամ պետության տարածք:

Միության այն անդամ պետության տարածքում կատարված նախորդ գործարքների մասին տեղեկատվությունը, որի տարածքից ներմուծվում են հետազոտելի ապրանքները, առանձին հարցման հիման վրա էլեկտրոնային տեսքով ուղարկվում է Միության այն անդամ պետության լիազորված մարմնի կողմից, որի տարածք այդ ապրանքները ներմուծվում են:

2.10. Միության անդամ պետությունների կառավարությունները սահմանում են ապրանքների հետազոտության համար անհրաժեշտ տեղեկությունների ուղարկման համար պատասխանատու լիազորված մարմին:

2.11. «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ապրանքների հետազոտությունն ապահովելու մեխանիզմն սահմանելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Միության մաքսային տարածք ներմուծված եւ այդ տարածքում փաստացի գտնվող բոլոր ապրանքները Համաձայնագրով սահմանված կարգով եւ պայմաններով ենթակա են ներառման հետազոտության համակարգում:

2.12. Համաձայնագրի տեքստում սահմանել ապրանքների հետազոտությունն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունների սպառիչ ցանկ:

3. Նշել, որ Միության անդամ պետությունները մտադիր են՝

3.1. 2018 թվականի փետրվարի 1-ից սկսել հետազոտության մեխանիզմի ներդրման պիլոտային նախագծի անցկացումը:

Պիլոտային նախագիծը կտարածվի սահմանափակ քանակությամբ ապրանքային դիրքերի վրա (նվազագույնը 4 նիշերի մակարդակով՝ ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ))՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանվող ցանկին համապատասխան:

3.2. Հանձնաժողովի խորհրդի որոշմանը համապատասխան 2018 թվականի ընթացքում անցնել մշտական հիմունքներով ապրանքների հետազոտության մեխանիզմի շահագործմանը՝ ելնելով պիլոտային նախագծի անցկացման արդյունքներից:

Մշտական հիմունքներով հետազոտության ենթակա ապրանքների ցանկը՝ ԱՏԳ ԱԱ ծածկագրերի նշմամբ, սահմանվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

4. Մույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում, դրա հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Բելառուսի Ղազախստանի Ղրղզստանի Ռուսաստանի
Հանրապետությունից Հանրապետությունից Հանրապետությունից Հանրապետությունից Դաշնությունից

